Լոռու մարզպետարան,

մարզպետ Արամ Խաչատրյանին

Վանաձորի համայնքապետարան,

համայնքի ղեկավարի պաշտոնակատար Արկադի Փելեշյանին

Հարգելի պարոն Խաչատրյան,

Հարգելի պարոն Փելեշյան,

Տեղական ինքնակառավարման ՀՀ օրենքի հոդված 40, 2-րդ մասի, 3-րդ կետի համաձայն համայնքի ղեկավարը ապահովում է համայնքի աշխարհազորային պայմանական բրիգադի և (կամ) գումարտակի համալրումն աշխարհազորայիններով՝ համապատասխան համայնքում հաշվառված քաղաքացիներից: Պաշտպանության մասին ՀՀ օրենքի հոդված 29.1-ի 6-րդ և 7-րդ մասերի համաձայն, աշխարհազորային զորամիավորման և բրիգադի ղեկավարներն են համապատասխանաբար մարզպետի և համայնքի ղեկավարի տեղակալները:

Ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 51-րդ հոդվածով և «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածով՝ խնդրում եմ տրամադրել տեղեկատվություն հետևյալի վերաբերյալ.

1. Արդյո՞ք աշխարհազորում կարող են ընդգրկվել Վանաձոր համայնքում փաստացի բնակվող, սակայն չհաշվառված ՀՀ քաղաքացիները,
2. Հաշվի առնելով, որ Վանաձոր համայնքը չունի ղեկավար և համապատասխանաբար համայնքի ղեկավարի տեղակալներ, ո՞վ է իրականացնում աշխարհազորային բրիգադի ղեկավարումը,
3. Լոռու մարզպետի ո՞ր տեղակալն է իրականացնում աշխարհազորային զորամիավորման ղեկավարումը:
4. Արդյո՞ք իրականացվում է Պաշտպանության մասին ՀՀ օրենքի հոդված 29.1-ի 13-րդ մասով նախատեսված պատրաստական աշխատանքները և արդյո՞ք հնարավոր է այդ աշխատանքներին մասնակցությունը, Վանաձոր համայնքի աշխարհազորի կազմում ներգրավվելու անհնարինության դեպքում:

Համաձայն «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի՝ քաղաքացիների տեղեկություն ստանալու գրավոր հարցմանը պատասխան տրվում է այն ստանալուց հետո 5 օրյա ժամկետում, ուստի խնդրում եմ սույն գրությանը պատասխանել օրենքով սահմանված կարգով և ժամկետներում

Տեղեկատվությունը կարող է տրամադրվել նաև էլ. եղանակով՝ ant.ivchenko@gmail.com էլ. հասցեին ուղարկելու միջոցով:

Հարգանքով՝ Անտոն Իվչենկո